

Ամերիկյան գրականություն, Արծակ, Պատմվածք

Վահան Վարդանյանի թարգմանությամբ

16+

ՋԵԿ ԼՈՆԴՈՆ

«Հազար ոյուժինը» առաջին անգամ «Նեյշնլը մեգեզին» հանդեսում, 1903 թվականի մարտին:

ՀԱՉԱՐ ԴՅՈՒԺԻՆ

Դևիդ Ռասմուսսենը աչքի էր ընկնում ձեռներեցությամբ և, ինչպես շատերը, Նույնիսկ սովորականից էլ ցածր մարդիկ, մի մտքով էր տարված: Ահա թե ինչու, երբ Հյուսիսի շեփորի կանչը հասավ Նրա ականջին, Նա որոշեց ձվի առևտուր անելով հարստանալ, և իր բոլոր ուժերը նվիրեց այդ գործին: Նա հակիրճ ու ճշգրիտ հաշվումներ կատարեց, և ապագան ծիածանի բոլոր գույներով կայծկտաց ու շողշողաց Նրա առջև: Որպես գործարար հիպոթեզ կարելի էր ենթադրել, որ Դոուսոնում մի ոյուժին ձուկ հինգ դոլարից պակաս չի արժենա: Այստեղից անվերապահորեն հետևում էր, որ հազար ոյուժինով կարելի է հինգ հազար դոլար վաստակել Ոսկու Մայրաքաղաքում:

Մյուս կողմից՝ պետք էր հաշվի առնել ծախսերը, և Նա դրանք հաշվի առավ որպես զգույշ, շատ գործնական ու սթափ մարդ, որը հափշտակվելու և գլուխը կորցրած գործելու ընդունակ չէ: Մեկ ոյուժինը տասնհինգ սենթ արժենալու դեպքում հազար ոյուժին ձուկ կնստի հարյուր հիսուն դոլար. չնչին բան՝ վիթխարի շահույթի համեմատությամբ: Իսկ եթե ենթադրենք, միայն ենթադրենք, այնպիսի առասպելական թանկություն, որ ճանապարհի և ձվերի փոխադրման վրա ուր հարյուր հիսուն դոլար կծախսվի, այնուամենայնիվ, վերջին ձուկ ծախելուց և ոսկեավազի վերջին պտղունցը տոպրակի մեջ լցնելուց հետո իր ձեռքին չորս հազար դոլար կմնա:

— Հասկանում ես, Ալմա, — հաշվում էր Նա բարձրաձայն, կնոջ հետ Նստած հաճելի ճաշասենյակում, որը լիքն էր Այասկայի վերաբերյալ քարտեզներով, կառավարական հաշվետվություններով և ուղեցույցներով, — հասկանում ես, իսկական ծախսերը միայն Դայայից են սկսվում, իսկ մինչև Դայա ճանապարհածախսի համար հիսուն դոլարը լրիվ բավական է, Նույնիսկ եթե առաջին կարգի տոմս վերցնեն: Դե Դայայից մինչև Լինդերման լիճը հնդկացի բեռնակիրները մեկ ֆունտի համար տասներկու սենթ են վերցնում, այսինքն՝ տասներկու դոլար հարյուր ֆունտի համար, իսկ հազար ֆունտի համար՝ 120 դոլար: Ասենք թե ես հազար հինգ հարյուր ֆունտ կունենամ, դա հարյուր ութսուն դոլար կնստի. մի բան էլ զգենք չնախատեսված ծախսերի համար՝ ասենք մի երկու հարյուր դոլար: Քլոնդայկից եկած մեկը ինձ ազնիվ խոսքով հավատացնում էր, որ Լինդերմանում նավակը կարելի է երեք հարյուր դոլարով գնել: Նույն մարդն ասում էր, թե դժվար չէ երկու ուղևոր գտնել և մարդագլուխ հարյուր հիսուն դոլար վերցնել. նշանակում է՝ նավակը ձրի կլինի և բացի դրանից, Նրանք կօգնեն ճանապարհին: Դե. . . ահա և բոլորը: Դոուսոնում ձուկ բեռնաթափում են հենց ափին: Ապա մի հաշվիր, թե ինչքան կկազմի այս բոլորը:

— Հիսուն դոլար Սան-Ֆրանցիսկոյից մինչև Դայա, երկու հարյուր՝ Դայայից մինչև Լինդերման, նավակի համար վճարում են ուղևորները, ուրեմն ամբողջը երկու հարյուր հիսուն, — արագորեն հաշվեց կինը:

— Մի հարյուր էլ հազուստի և հանդերձանքի համար, — ուրախ-ուրախ ավելացրեց ամուսինը, — ուրեմն մի հինգ հարյուր էլ դեռ կմնա, չնախատեսված ծախսերի համար: Իսկ ի՞նչ չնախատեսված ծախսեր կարող են լինել:

Ալման ուները թոթվեց և հոնքերը վեր քաշեց: Եթե հյուսիսի տարածությունները կարող են մարդուն և հազար ոյուժին էլ ձուկ կլանել, ապա Նրանք կարող են կլանել Նաև Նրա ամբողջ ունեցվածքը: Այսպես մտածեց Նա, բայց ոչինչ չասաց: Նա շատ լավ էր ճանաչում Դևիդ Ռասմուսսենին և այդ իսկ պատճառով էլ գերադասեց լռել:

— Եթե նույնիսկ երկու անգամ ավելի հաշվենք ժամանակը,— պատահական ուշացումները նկատի ունենալով,— ապա ամբողջ ուղևորությունը երկու ամիս կտևի: Ապա մի մտածիր, Ալմա: Չո՞րս հազար՝ երկու ամսում: Ի՞նչ համեմատություն այն խղճուկ հարյուրի հետ, որ ես հիմա ստանում եմ մեկ ամսում: Մենք նոր տուն կկառուցենք, ավելի ընդարձակ, բոլոր սենյակներում գազ կունենանք, տունը ծովահայաց կլինի, իսկ քոտեջը վարձով կտամ և այդ փողով կվճարեմ հարկերը, ապահովագրության ու ջրի համար, և մի բան էլ ձեռքիս կմնա: Կարող է պատահել նաև, որ ոսկու երակի հանդիպեմ և վերադառնամ որպես միլիոնատեր: Ապա մի ասա, Ալմա, ինչ ես կարծում, հաշվումներս խիստ չափավոր են, չէ՞:

Եվ Ալման կարող էր խղճի մոռը պատասխանել, որ՝ այո: Իսկ դրանից բացի, մի՞թե իր ազգականներից մեկը,— ճիշտ է, շատ հեռավոր, գերդաստանի քոսոտ այժն ու ծուլը, որպիսիք քիչ են,— մի՞թե խորհրդավոր Յյուսիսից հարյուր հազար ոսկի ավագ չբերեց: Էլ չենք խոսում այն ոսկու հորի փայտիթղթյան մասին, որից արդյունահանում էին:

Հարևան նպարավաճառը շատ զարմացավ, երբ իր մշտական գևորդ Դևիդ Ռասմուսսենը խանութի մի անկյունում սկսեց ձու կշռել: Բայց ավելի շատ զարմացավ ինքը՝ Ռասմուսսենը, տեսնելով, որ մի ոյուժին ձուն մեկուկես ֆունտ է կշռում, ուրեմն հազար ոյուժինը հազար հինգ հարյուր ֆունտ կկշռի. հագուստի, վերմակների և ամանեղենի համար պարզապես ոչինչ չի մնա, էլ չենք ասում այն մթերքի մասին, որն անհրաժեշտ կլինի ճանապարհին: Նրա բոլոր հաշիվները ի դերև ելան, և նա արդեն պատրաստվում էր ամեն ինչ նորից հաշվել, երբ հանկարծ մոքովն անցավ ավելի փոքր ձկերը կշռել:

— Մանր լինի, թե խոշոր՝ ոյուժինը ոյուժին է,— միանգամայն ողջամտորեն մտածեց նա ինքն իրեն և, մի ոյուժին մանր ձու կշռելով, տեսավ, որ դրանք մեկ ու քառորդ ֆունտ են կշռում: Շուտով Սան-Ֆրանցիսկո քաղաքով մեկ սկսեցին վազվզել մտահոգված սուրհանդակները, իսկ առևտրական գրասենյակներն ու կաթնամթերք վաճառողները զարմացել էին քսան ունցիայից ոչ ավելի քաշ ունեցող մեկ ոյուժին ձվի նկատմամբ եղած անսպասելի պահանջարկից:

Ռասմուսսենը իր փոքրիկ առանձնատունը գրավ դրեց հազար դոլարով, կնոջը հյուր ուղարկեց հարազատների մոտ, թողեց աշխատանքը և մեկնեց Յյուսիս: Նախահաշվի սահմաններից դուրս չգալու համար նա որոշեց կոմպրոմիսի դիմել և երկրորդ կարգի տոմս վերցրեց, որտեղ ուղևորների շատության պատճառով ավելի վատ էր, քան տախտակամածի վրա, և ամռան վերջին, գունատ ու թուլացած, իր բեռով ափ իջավ Դայայում: Սակայն շատ շուտով նա վերստացավ իր հաստատուն քայլվածքն ու ախորժակը: Հնդկացի բեռնակիրների հետ ունեցած առաջին իսկ խոսակցությունը ամրապնդեց նրան ֆիզիկապես և կոփեց բարոյապես: Նրանք քառասուն սենթ պահանջեցին մեկ ֆունտը քսանութ մղոն տեղափոխելու համար, և Ռասմուսսենը դեռ չէր հասցրել զարմանքից բերանը բաց անել, երբ գինը հասավ քառասուներեքի: Վերջապես տասնհինգ ամրակազմ հնդկացիներ, իրար հետ համաձայնության գալով քառասունհինգ սենթով, պարաններով ձգեցին նրա հակերը, բայց տեղնուտեղը նորից կապերն արձակեցին, որովհետև սքազուեյցի ինչ-որ մի կրեստս՝ կեղտոտ վերնաշապկով ու ճղճված անդրավարտիքով, որը իր ձիերն ուժասպառ էր արել Սպիտակ Լեռնանցքում և այժմ Չիլկոթով Դոուսոն հասնելու վերջին փորձն էր անում, մեկ ֆունտի համար քառասուկոթ սենթ առաջարկեց նրանց:

Բայց Ռասմուսսենը տոկոսություն ցուցաբերեց և հիսուն սենթով բեռնակիրներ գտավ, որոնք երկու օր ուշացումով նրա ապրանքը անվնաս հասցրին Լինդերման լճի մոտ: Սակայն ֆունտի համար հիսուն սենթ, այդ նշանակում է հազար դոլար մեկ տոննայի համար, և այն բանից հետո, երբ հազար հինգ հարյուր ֆունտը կերավ նրա ամբողջ հավելյալ ֆոնդը, նա երկար ժամանակ նստած մնաց Տանտալ հրվանդանում, ամեն օր նայելով, թե ինչպես նոր պատրաստված նավակները իրար հետևից Դոուսոն են մեկնում: Դեռք է ասել, որ ամբողջ ճամբարը, որտեղ նավակներ էին պատրաստվում, տագնապով էր համակված: Մարդիկ աշխատում էին խելագարի պես առավոտից մինչև գիշեր, բոլոր ուժերը լարելով. նավակներն էին խցում, ձյութում, ամրացնում տենդագին հապճեպությամբ, որի բացատրությունը միանգամայն պարզ էր: Ձյունագիծը օրեցօր ավելի ու ավելի ներքև էր իջնում մերկացած կատարներից, քամին վրա էր հասնում պոռթկումներով, իր հետ բերելով մերթ սառնամանիք, մերթ թաց կամ չոր ձյուն, իսկ խաղաղ գետախորշերում և ափերի մոտ ավելանում էր սառույցը և ժամ առ ժամ ավելի ու ավելի հաստանում: Աշխատանքից տանջված մարդիկ ամեն առավոտ նայում էին լճին, թե արդյո՞ք սառցակալումը չի սկսվել: Չէ որ սառցակալումը կնշանակեր, թե այլևս հուսալու բան չկա. իսկ

Նրանք հույս ունեին, որ երբ լճերում նավարկությունը փակված լինի, իրենք արդեն նավարկելիս կլինեն արագընթաց գետնի վրա:

Ռասմուսսենի սիրտն ավելի սաստիկ էր ճմլում այն, որ նա ձվի առևտուր անող երեք մրցակիցների էր հայտնաբերել: Ճիշտ է, Նրանցից մեկը, որ կարճահասակ գերմանացի էր, արդեն լրիվ սնանկացել էր և, այլևս ոչ մի բանի հույս չունենալով, ինքն էր ետ տանում իր ապրանքի վերջին հակերը, բայց թե մյուս երկուսի նավակները գրեթե պատրաստ էին, և Նրանք ամեն օր առևտրի ու վաճառականության աստծուն աղոթում էին, որ թեկուզ մեկ օրով ևս ուշացնի ձմռան երկաթե ձեռքի վրա հասնելը: Բայց այդ երկաթե ձեռքն արդեն կաշկանդել էր երկիրը, ձյունաբուքը ծածկում էր Չիլկուլթը, մարդիկ սառչում-մեռնում էին, և Ռասմուսսենը չնկատեց, թե ինչպես ցրտահարվեցին իր ոտքերի մատները: Այդ պահին, գետաքարերին քսվելով, ափից հեռացող նավակի մեջ տեղավորվելու առիթ եղավ, բայց հարկավոր էր կանխիկ երկու հարյուր դոլար վճարել, իսկ նրա մոտ փող չէր մնացել:

— Ես այսպես մտածել, դուք մի քիչ սպասել,— ասում էր Նրան նավակ պատրաստող շվեդը, որը հենց այստեղ էր գտել իր Քլոնդայկը և բավականաչափ խելոք էր գտնվել հասկանալու այդ բանը,— շատ քիչ սպասել և ես ձեզ համար շինել շատ լավ նավակ, ճիշտ խոսք:

Այս խոսքին հավատալով, Ռասմուսսենը վերադարձավ խառնարան լճի մոտ և այնտեղ հանդիպեց երկու թղթակիցների, որոնց բեռները թափափված էին լեռնանցքով մեկ, Զարե Տսից մինչև Երջանիկ ճամբարը:

— Այո,— ասաց նա նշանակալից:— Իմ հազար դյուծին ձուն արդեն փոխադրված է Լինդերման լճի մոտ, իսկ հիմա այնտեղ արդեն ավարտում են իմ նավակի խցումը: Եվ ես գտնում եմ, որ բախտս բանել է: Ինքներդ գիտեք, այժմ նավակներն իրար ձեռքից են խլում, ինչքան ուզում ես փող տուր՝ ձեռք չես գցի:

Թղթակիցները գոռգոռալով ու գրեթե կռվելով, Ռասմուսսենին հարկադրեցին իրենց վերցնել որպես ուղեկիցներ. թղթե դոլարներն էին թափահարում նրա քթի տակ ու նրա ձեռքը խցկում: Սա ոչինչ չէր ուզում լսել, սակայն վերջ ի վերջո զիջեց հորդորանքներին և դժկամությամբ համաձայնվեց յուրաքանչյուրից երեք հարյուր դոլար առնելով՝ իր հետ վերցնել թղթակիցներին: Նրանք փողը վճարեցին հենց սկզբից: Ու մինչ երկուսն էլ իրենց թերթերի համար հաղորդագրություններ էին պատրաստում բարի սամարացու մասին, որը հազար դյուծին ձու էր տանում, այդ բարի սամարացին արդեն շտապում էր Լինդերման լիճ, շվեդի մոտ:

— Չէ՛, դուք: Ապա մի այս կողմ բերեք այդ նավակը,— ողջունեց նա շվեդին, զնգզնգացնելով թղթակիցների տված ոսկեդրամները և ագահորեն նայելով պատրաստի նավակին:

Շվեդը գլուխն օրորելով, անտարբերությամբ նրան էր նայում:

— Ինչքա՛ն պետք է վճարեմ դրա համար: Երեք հարյու՞ր: Լավ, ահա, ձեզ չորս հարյուր: Վերցրեք:

Նա փողը խցկում էր շվեդի բուռը, բայց գնում նրանից:

— Ես կարծել, ոչ: Ես նրան ասել նավակը պատրաստ, կարելի վերցնել: Դուք մի քիչ սպասել...

— Ահա ձեզ վեց հարյուր: Ուզում եք վերցրեք, ուզում եք՝ ոչ: Վերջին անգամ եմ առաջարկում: Նրան ասացեք, որ սխալմունք է եղել:

Շվեդը տատանվեց ու վերջապես ասաց.

— Ես կարծել, այո:— Եվ դրանից հետո Ռասմուսսենը նրան տեսավ միայն մեկ անգամ, երբ նա, ջղաձգորեն լեզուն աղավաղելով, փորձում էր մյուս պատվիրատուներին բացատրել, թե ինչպիսի սխալմունք է եղել:

Գերմանացին, խոր լճի մոտ զառիթափ լանջի վրա սայթաքելով, ոտքը կոտրել էր և, իր ամբողջ ապրանքը վաճառելով դյուծինը մեկ դոլարով, ստացված փողով վարձել էր հնդկացի բեռնակիրներին, որ իրեն ետ տանեն Դայա: Բայց մյուս երկու մրցակիցները Ռասմուսսենի հետևից ճանապարհ ընկան հենց նույն առավոտյան, երբ նա իր ուղեկիցների հետ հեռացավ ափից:

— Դուք ինչքա՞ն ունեք,— ձայն տվեց Ռասմուսսենին նրանցից մեկը՝ մի նիհար ու փոքրամարմին յանկի:

— Հազար դյուծին,— հպարտությամբ պատասխանեց Ռասմուսսենը:

— Օհո՛: Իսկ ես ութ հարյուր ունեմ: Եկեք գրագ գանք, որ ես ձեզնից առաջ կանցնեմ:

Թղթակիցները պարտքով փող էին առաջարկում Ռասմուսսենին, բայց սա հրաժարվեց և այն ժամանակ յանկին գրագ եկավ մրցակիցներից վերջինի հետ, ալիքի հզոր որդու, ծով ու ցամաք տեսած մի մարդու հետ, որը խոստանում էր, եթե հարկ լինի, իսկական աշխատանք ցույց տալ նրանց: Եվ ցույց տվեց՝ բրեզենտե մի մեծ առագաստ դնելով, որից նավակի քթամասը քամու ամեն մի պոռթկումի հետ խրվում էր ջրի մեջ: Նա առաջինը դուրս եկավ Լինդերման լճից, բայց չցանկացավ քարշավայրով գնալ և ծանրաբեռնված նավակը նստեցրեց քլթթթթաօղ սահանքների մեջ ընկած քարերի վրա: Ռասմուսսենը և յանկին, որը նույնպես երկու ուղևոր ունեւ, բեռները շալակով փոխադրեցին, իսկ հետո դատարկ նավակը վտանգավոր տեղից փոխադրեցին Բեննեթ լիճ:

Բեննեթը քսանհինգ մղոն երկարությամբ լիճ է, լեռներում ընկած նեղ ու խոր մի ձագար, փոթորիկների խաղատեղի: Ռասմուսսենը գիշերեց լճի վերին մասում ընկած ավազե ցամաքալեզվակի վրա. այստեղ շատ ուրիշ մարդիկ ու նավակներ կային, որոնք ի հեճուկս արկտիկական ձմռան, դեպի հյուսիս էին գնում: Լուսադեմին նա լսեց հարավային քամու սուլոցը, որը ձյունապատ կատարների ու սառցակալած ձորերի ցուրտը վերցնելով, ավելի տաք չէր, քան հյուսիսային քամին: Սակայն եղանակը պարզ էր, և յանկին արդեն բոլոր առագաստները պարզած շրջանցում էր զառիթափ հրվանդանը: Նավակ նավակի հետևից հեռանում էին ավից, և թղթակիցները ոգևորությամբ գործի անցան:

— Մենք նրան կհասնենք Եղջերվի լեռնանցքի մոտ,— հավատացնում էին նրանք Ռասմուսսենին, երբ առագաստներն արդեն դրվել էին, և սառը ցայտերն առաջին անգամ թրջեցին «Ալման»:

Ռասմուսսենն իր ամբողջ կյանքում վախեցել էր ջրից, բայց հիմա նա կպել էր ղեկաթից, ատամները սեղմել և ասես քարացել էր: Նրա հազար դյուծինը այստեղ էր, նավակի մեջ, նա այն տեսնում էր իր առջև, ծածկված թղթակիցների բեռներով, և միևնույն ժամանակ, չգիտես ինչպես, նա իր առջև տեսնում էր և՛ փոքրիկ առանձնատունը, և՛ հազար դուլարի գրավաթուղթը:

Դաժան սառնամանիք էր: Ռասմուսսենը ժամանակ առ ժամանակ դուրս էր քաշում ղեկաթին ու դնում մեկ ուրիշը, իսկ ուղևորները թիակի սառույցն էին կոտրում: Ջրացայտերը սառչում էին թռչելու պահին և ստորին թեք առագաստափայտը արագորեն ծածկվեց սառցալուլաներով: «Ալման» զարնվում էր բարձր ալիքների մեջ ու ճարճատում ամեն կողմից, բայց ջուրը դուրս թափելու փոխարեն, թղթակիցները ստիպված էին սառույցը ջարդել և դուրս թափել նավակից: Նահանջել այլևս հնարավոր չէր: Ձմռան հետ հուսահատ գոտեմարտ սկսվեց, և նավակները իրար հետևից կատաղորեն առաջ սլացան:

— Մ-մենք նույնիսկ հանուն հոգու փրկության չ-չենք կարողանա կանգնել,— բղավեց թղթակիցներից մեկը, չիսկչիսկացնելով ատամները, բայց ոչ թե վախից, այլ ցրտից:

— Ճիշտ է: Կենտրոնին մոտիկ պահիր, ծերուկ,— հաստատեց մյուսը:

Ռասմուսսենը պատասխանեց անիմաստ ժպիտով: Սառնամանիքից շղթայված ավերը ասես թե սապնափրփուրով էին պատած և, խոշոր ալիքներից խուսափելու համար, հարկավոր էր միայն մոտիկ մնալ լճի կենտրոնին. ուրիշ բանի վրա հույս դնել հնարավոր չէր: Առագաստն իջեցնել՝ նշանակում էր ալիքին թույլ տալ հասնել ու տակով անել նավակը: Նրանք երբեմն առաջ էին անցնում քարերի մեջ դեսուդեն ընկնող նավակներից, իսկ մի նավակ էլ հենց նրանց աչքի առաջ սահանքների վրա ընկավ: Հետևում եղած փոքրիկ նավակը, որի մեջ երկու մարդ կար, շրջվեց տակն ի վեր:

— Չգո՛ւյշ եղիր, ծերուկ,— ձայն տվեց նա, որը ատամներն էր չիսկչիսկացնում:

Ռասմուսսենը պատասխանեց ժպիտով և փայտացած ձեռքերով է՛լ ավելի ամուր սեղմեց ղեկը: Ալիքը քսան անգամ հասավ «Ալմայի» քառակուսի նավախելին և նրան դուրս բերեց քամու հոսանքից, այնպես որ առագաստն սկսում էր ծածանվել, և ամեն անգամ, իր բոլոր ուժերը

լարելով, Ռասմուսսենը նորից շտկում էր նավակը: Այժմ ժպիտը ասես սառել էր նրա դեմքի վրա, և անհանգստացած թղթակիցները երկյուղով էին նայում նրան:

Նրանք արագ անցան ավից հարյուր քայլի վրա ցցված միայնակ ժայռի մոտով: Ինչ-որ մեկը ալիքներով ողողվող ժայռակատարից ուժգին ձայն տվեց նրանց, մի պահ խլացնելով փոթորկի աղմուկը: Բայց հաջորդ պահին «Ալման» արդեն առաջ անցավ, և ժայռը մնաց հետևում՝ սևին տալով ավելոծվող փրփուրի մեջ:

— Յանկին կորավ: Իսկ ո՞ւր է նավաստին,— ձայն տվեց ուղևորներից մեկը:

Ռասմուսսենը գլուխը շրջեց և աչքերով որոնեց սև առագաստը: Այդ առագաստը մեկ ժամ առաջ քամահայաց կողմից դուրս լողաց գորշ մառախուղից, և հիմա Ռասմուսսենը անընդհատ նայում ու տեսնում էր, որ առագաստը անընդհատ մոտենում է ու մեծանում: Ըստ երևույթին նավաստին հասցրել էր փակել ճեղքվածքները և այժմ աշխատում էր շահել կորցրած ժամանակը:

— Տեսե՞ք, հասնում է:

Երկու ուղևորները դադարեցին սառույց կտորելը և նույնպես սկսեցին հետևել սև առագաստին: Բեննեթ լճի քսանհինգ մղոնը մնաց հետևում. փոթորիկը կարող էր մոլեգնել՝ ջրալեռները երկինք չարտելով: Մերթ անդունդ գլորվելով, մերթ վեր բարձրանալով, նավաստին փոթորկի ոգու նման սլացավ նրանց մոտով: Հսկայական առագաստն ասես թե ալիքների կատարից վերցնում էր նավակը, կտրում ջրից ու թնդունով չարտում ալիքների արանքում ընկած մուլթ խորխորատի մեջ:

— Ալիքը նրան չի հասնի:

— Հիմա ուր որ է քթամասը կխրվի ջրի մեջ:

Նույն պահին ալիքի բարձր կատարը ծածկեց սև բրեզենտը: Երկրորդ և երրորդ ալիքները գլորվեցին այդ տեղի վրայով, բայց նավակն այլևս չհայտնվեց: «Ալման» անցավ նրա կողքով: Դուրս լողացին կտորված թիակներ, արկղների տախտակներ: «Ալմայից» մի քսան քայլ հեռավորության վրա մի ձեռք դուրս ցցվեց ջրից, հետո մազախռիվ մի գլուխ երևաց:

Մի պահ բոլորը սսկվեցին: Հենց որ լճի մյուս ավեր երևաց, ալիքներն սկսեցին այնպիսի ուժով խփվել նավակին, որ թղթակիցներն այլևս սառույցը չէին կտրում, այլ եռանդուն կերպով ջուրն էին դուրս թափում: Նույնիսկ դա էլ չօգնեց և, Ռասմուսսենի հետ խորհրդակցելով, նրանք զբաղվեցին բեռներով: Այլուրը, ապուխտը, բակլան, վերմակները, նավթավառը, պարանը, այն ամենը, ինչ որ ձեռքի տակ էր ընկնում, դուրս թափվեց նավակից: Նավակն անմիջապես արձագանքեց այդ բանին. նա ավելի քիչ ջուր էր ներծծում և ավելի թեթևությամբ առաջ գնում:

— Դե լավ, բավական է,— խիստ ձայնով ասաց Ռասմուսսենը, երբ նրանք ձվերի առաջին արկղին հասան:

— Չէ՛ մի: Գրողի՛ ծոցը,— գազազեց նա, որը ատամներն էր չխկչխկացնում: Նրանք երկուսն էլ զոհաբերել էին իրենց ունեցվածքը, բացի գրառման գրքույկներից, լուսանկարչական ապարատից ու ձայնապնակներից: Թղթակիցը կռացավ, բռնեց ձվերով լի արկղը և սկսեց դուրս քաշել պարանների տակից:

— Թո՛ղ: Թո՛ղ, քեզ ասում եմ:

Ռասմուսսենը կարողացավ ինչ-որ կերպ դուրս քաշել ատրճանակը և, արմունկով դեկը պահած, նշան բռնեց: Թղթակիցը թռավ բանկայի վրա. նա կանգնել, օրորվում էր, և նրա դեմքը չարությամբ ու սպառնալից ծռմռվեց:

— Աստված իմ:

Սա ասաց երկրորդ թղթակիցը, երեսնիվայր ընկնելով նավակի հատակին: «Ալման», որի մասին այդ պահին գրեթե մոռացել էր Ռասմուսսենը, ընկավ հորձանուտի մեջ ու պտտվեց: Առագաստը ծածանվեց, առագաստափայտը ահավոր ուժով առաջ թեքվեց և առաջին թղթակցին դուրս չարտեց նավակից, ջարդելով նրա ողնաշարը: Կայմը, առագաստով հանդերձ, նույնպես ջուրն ընկավ: Ալիքը հորդեց ուղղությունը կորցրած նավակի մեջ, և Ռասմուսսենը նետվեց ջուրը դուրս թափելու:

Հաջորդ կես ժամվա ընթացքում նրանց մոտով անցան մի քանի նավակներ, և՛ փոքրեր, և՛ այնպիսիք, ինչպիսին «Ալման» էր, բայց նրանք բոլորն էլ, սարսափից հալածված, միայն առաջ կարող էին սլանալ: Վերջապես տասը տոննասոց բեռնակիր գետնաավ, իրեն կործանման վտանգի ենթարկելով, քամու կողմից առագաստներն իջեցրեց և, ծանրորեն շրջվելով, մոտեցավ «Ալմային»:

— Ե՛տ գնա: Ե՛տ գնա,— գոռաց Ռասմուսները:

Սակայն նրա նավակի երկարությամբ զգված ցածր գերանը արդեն ճնշեցով քսվում էր ծանրամարմին գետնաավին, և կենդանի մնացած թղթակիցը մագլցում էր նրա բարձր տախտակամածի վրա: Ռասմուսները «Ալմայի» քթամասում կատվի նման նստել էր իր հազար դյուլմին վրա, փայտացած մատներով ջանալով կապել երկու ծայրերը:

— Բարձրացի՛ր,— գետնաավից նրան ձայն տվեց շիկամորուս մարդը:

— Ես այստեղ հազար դյուլմին ձու ունեմ,— ի պատասխան ձայն տվեց նա:— Բուքսի՛ր վերցրեք ինձ: Ես կվճարեմ:

— Բարձրացի՛ր,— գոռում էին նրան խմբովին:

Սպիտակ կատարով բարձր ալիքը կանգնեց բեռնանավի գլխավերևում և, նրա վրայով թռչելով, կիսով չափ խորասուզեց «Ալման»: Մարդիկ ձեռքները թափ տվեցին և, ինչպես հարկն է հայիոյելով Ռասմուսներին, առագաստը բարձրացրին: Ռասմուսները նույնպես հայիոյեց ու նորից սկսեց ջուրը դուրս թափել: Առագաստով կայմը դեռևս կանգուն էր մնում պարանների օգնությամբ և գործում էր խարսխի պես՝ նավակին օգնելով դիմադրելու ալիքներին ու քամուն: Երեք ժամ հետո, ամբողջովին փայտացած, հալից ընկած և խելագարի պես քրթմնջալով, բայց շարունակելով ջուրը դուրս թափել, Ռասմուսները հասավ սառցապատ ափին՝ Եղջերվի լեռնանցքի մոտ: Կառավարական սուրհանդակը և մետիս ուղեկցորդը երկուսով նրան դուրս բերեցին ափակոծության գոտուց, փրկեցին նրա ամբողջ բեռը և ափ հանեցին «Ալման»: Այդ մարդիկ ձկնորսանավակով գալիս էին Դոուսոնից, բայց փոթորկի պատճառով ուշացել էին ճանապարհին: Նրանք Ռասմուսներին գիշերը ապաստան տվեցին իրենց վրանում: Առավոտյան ուղևորները ճանապարհ ընկան, բայց Ռասմուսները գերադասեց մնալ իր հազար դյուլմին ձվի հետ: Եվ դրանից հետո երկրով մեկ սկսեցին լուրեր պատվել այն մարդու մասին, որը հազար դյուլմին ձու էր բերում: Ոսկի որոնողները, որ տեղ էին հասել սառցակալման նախօրյակին, իրենց հետ լուր էին բերել, որ նա ճանապարհին է: Քառասունեորդ Մոդոկի և Սյորքլի ալեհեր բնիկները, երկաթե ծնոտներով և բակլայից կոշտացած ստամոքսներով վետերանները նրա սոսկ անունը լսելիս աղոտ կերպով, ասես երագում, վերհիշում էին հավի ճտերն ու թարմ կանաչին: Դայան և Սքագուեյը խիստ հետաքրքրվում էին նրանով և նրա մասին հարց ու փորձ էին անում լեռնանցքները հաղթահարած ամեն մի ուղևորի, իսկ Դոուսոնը՝ ձվածեղին կարոտած ոսկե Դոուսոնը հուզվում էր ու տազնապում և ագահորեն որսում այդ մարդու մասին եղած ամեն մի լուրը:

Ռասմուսներն այդ մասին ոչինչ չգիտեր: Նավաբեկման հաջորդ օրը նա նորոգեց «Ալման» և առաջ շարժվեց: Տագիշ լճից արևելյան խստաշունչ քամին փչում էր նրա դեմքին, բայց նա բռնել էր թիակները և արիաբար թիավարում էր, թեև քամին անընդհատ ետ էր տանում նավակը, և ի լրումն դրա՝ նա ստիպված էր լինում սառցակալած թիակների սառույցը կտրել: Ինչպես որ հարկն է, «Ալման» ափ նետվեց Ուինդի-Արմի մոտ: Տագիշում ալիքը երեք անգամ իրար հետևից ողողեց Ռասմուսներին ու խփեց ափին, իսկ Մարշ լճում վրա հասավ սառցակալումը: Սառույցը կաշկանդեց «Ալման», բայց ձվերը ողջ մնացին: Նա իր հարստությունը սառցի վրայով երկու մղոն քարշ տվեց մինչև ափ և գաղտնի պահեստարան սարքեց այնտեղ, մի պահեստարան, որ այդ դեպքից մի քանի տարի հետո էլ տեղացիները ցույց էին տալիս հետաքրքրվողներին: Նա Դոուսոնից բաժանված էր հինգ հարյուր մղոն սառցակալած տարածությամբ, իսկ ջրային ճանապարհը փակ էր: Բայց Ռասմուսներն ասես ընդարմացել էր և նորից լճի վրայով ետ գնաց ոտքով: Թե ճանապարհին ինչեր քաշեց նա՝ հետև ունենալով միայն մեկ վերմակ, մի կացին ու մի բուռ բակլա,— հասարակ մահկանացուն հասկանալ չի կարող: Այդ բանը կարող է հասկանալ միայն Արկտիկայով ճանապարհորդողը: Բավական է ասել, որ Զիլկուբում նա բքի մեջ ընկավ, և Այծի ճամբարում բժիշկը կտրեց նրա ոտքի երկու մատները: Սակայն դրանից հետո էլ Ռասմուսները անձնատուր չեղավ: Ինչևն Փյուլքեթ Նեդուցը նա աման լվաց «Պավոնի» վրա, իսկ այնտեղից մինչև Սան-Ֆրանցիսկո՝ հնոցապան եղավ մարդատար շոգենավում:

Բոլորովին վայրենացած ու հոգնաբեկ՝ նա իրեն գցեց բանկիրական գրասենյակ, ոտքը քարշ տալով փայլուն մանրահատակի վրայով, և երկրորդ անգամ գրավով փող խնդրեց: Նրա ներս ընկած այտերը փայլվում էին ցանցառ մագերի միջից, աչքերը փոս էին ընկել ու վառվում էին սառը կրակով: Ձեռքերը կոշտացել էին ցրտից ու ծանր աշխատանքից, եղունգների տակ սև երիզով նստած էին կեղտն ու ածխափոշին: Նա ինչ-որ անհասկանալի բան էր փնթփնթում ձվերի, սառցակույտերի, քամիների ու հոսանքների մասին, բայց երբ հրաժարվեցին հազար դոլարից ավելի տալ, նրա խոսքերը բոլորովին անկապ դարձան, և կարելի էր միայն հասկանալ, որ խոսքը վերաբերում է շներին ու շների կերին, ինչպես նաև մոքասիներին, դահուկներին ու ձմեռային արահետներին: Նրան հազար հինգ հարյուր տվեցին, այսինքն՝ ավելի շատ, քան կարելի էր տալ նրա առանձնատան դիմաց, և բոլորը թեթևացած շունչ քաշեցին, երբ նա, դժվարությամբ ստորագրելով իր անունը, դուրս եկավ սենյակից:

Երկու շաբաթ անց, Ռասմուսները երեք սահնակով, յուրաքանչյուրին հինգ շուն լծած, անցավ Զիլկուբը: Մի շնասահնակը ինքն էր վարում, մնացածները՝ երկու հնդկացի սահնակավարներ: Մարշ 16ի մոտ նրանք քանդեցին պահեստարանը և ձվերը բեռնեցին սահնակների վրա: Բայց դեռևս արահետը բացված չէր: Ռասմուսները ոտքը դրեց սառույցի վրա, և նրան վիճակվեց տորթել ձյունը ու ճանապարհի բացել գետերի վրա գոյացած սառցակուտակումների միջով: Դադարի ժամանակ հաճախ նա հետևում տեսնում էր մաքուր օդի մեջ բարակ շերտով բարձրացող խարույկների ծուխը և զարմանում, թե ինչու մարդիկ չեն աշխատում առաջ անցնել իրենից: Նա նոր մարդ էր այդ տեղերում ու չէր հասկանում, թե բանն ինչումն է: Նա չէր հասկանում նաև իր հնդկացիներին, երբ նրանք փորձում էին բացատրել նրան: Նույնիսկ նրանց տեսակետով, դա չարքաշ աշխատանք էր, բայց երբ առավոտները նրանք համառում էին և հրաժարվում տեղից շարժվել, Ռասմուսները ատրճանակի սպառնալիքի տակ նրանց ստիպում էր գործի անցնել:

Սպիտակ Զիու սահանքների մոտ սառցանցքն ընկնելով, Ռասմուսները նորից ցրտահարեց իր ոտքը, որը առաջին դեպքից հետո շատ զգայուն էր ցրտի նկատմամբ, և հնդկացիները կարծում էին, թե նա անկողին կրկնի: Սակայն նա զոհաբերեց վերմակներից մեկը և, դրանից դույլի նմանփող հսկայական չափի մոքասիներ պատրաստելով, առաջվա պես գնում էր առաջին շնասահնակի հետևից: Դա ծանր աշխատանք էր, և հնդկացիները սովորեցին հարգել Ռասմուսներին, թեև զլուխները բազմանշանակալից օրորելով, մատով խփում էին իրենց ճակատին, երբ նա այդ բանը չէր կարող տեսնել: Մի անգամ գիշերը նրանք փորձեցին փախչել, սակայն ձյան մեջ խրվող գնդակների սուլոցը ուշքի բերեց նրանց, և նրանք վերադարձան՝ մռայլ, բայց հնազանդ: Դրանից հետո նրանք պայմանավորվեցին սպանել Ռասմուսներին, բայց սա շատ զգոն էր քնում, կատվի նման, և ոչ ցերեկը, ոչ էլ գիշերը հարմար առիթ չեղավ: Նրանք բազմիցս փորձեցին բացատրել հետևում երևացող ծխաշերտի նշանակությունը, բայց նա ոչինչ չհասկացավ և միայն սկսեց ավելի կասկածամտորեն վերաբերվել նրանց նկատմամբ: Իսկ եթե նրանք մռայլվում էին կամ խուսափում աշխատանքից, նա արագորեն հնազանդեցնում էր նրանց, ցույց տալով ատրճանակը, որը միշտ ձեռքի տակ էր պահում:

Այսպես էլ նրանք գնում էին. մարդիկ անհնազանդ էին, շները վայրենացել էին, դժվարին ճանապարհը ուժասպառ էր անում: Նա կռվում էր մարդկանց հետ, որոնք ուզում էին մենակ թողնել իրեն, կռվում էր շների հետ, նրանց վնդդելով ձվերի մոտից, կռվում էր սառույցի հետ, ցրտի հետ, ոտքի ցավի հետ, որը դեռ չէր անցել: Հենց որ վերքը փակվում էր, մաշկը ճաքճքվում էր սառնամանիքից, և ի վերջո ոտքի վրա այնպիսի մի խոց առաջացավ, որի մեջ կարելի էր մի ամբողջ բռունցք տեղավորել: Առավոտները, երբ նա կանգնում էր՝ զլուխը պտտվում էր ցավից, նա գրեթե կորցնում էր գիտակցությունը, բայց հետո օրվա ընթացքում ցավը սովորաբար մեղմանում էր ու վերսկսվում միայն գիշերը, երբ նա ծածկվում էր վերմակով ու փորձում քնել: Եվ այնուամենայնիվ այդ մարդը, նախկին հաշվետարը, որ կյանքի կեսը նստել էր գրասենյակում, այնպես էր աշխատում, որ հնդկացիները չէին կարողանում նրա հետևից հասնել. նույնիսկ շները նրանից ավելի շուտ էին շնչասպառ լինում: Նա ինքը չէր էլ հասկանում, թե որքան էր ստիպված լինում աշխատել ու համբերել: Նա մի գաղափարի մարդ էր, և այդ գաղափարը, մեկ անգամ ծնվելով, ստրկացրել էր նրան: Նրա գիտակցության վերևի մասում Դոուսոնն էր, խորքում՝ հազար ոլորտի ծուն, իսկ նրա «եսը» թափառում էր ինչ-որ տեղ՝ մեկի և մյուսի միջև ընկած կես ճանապարհին, ձգտելով նրանց ի մի բերել մի լուսավոր կետում: Այդ կետը հինգ հազար դոլարն էր՝ նրա գաղափարի հանգուցակետը և ելակետը մի նոր գաղափարի, ինչ էլ որ այն լիներ: Մնացած բոլոր բաներում նա պարզապես ավտոմատ էր: Նա նույնիսկ չէր էլ գիտակցում, որ աշխարհում

ուրիշ բան կա, շրջապատը աղոտ էր տեսնում, ինչպես ապակու միջով, և անտարբերությամբ էր վերաբերվում նրան: Նրա ձեռքերն աշխատում էին լարված մեքենայի ճշտությամբ, նույն ձևով էր աշխատում նաև գլուխը: Նրա դեմքի արտահայտությունն այնքան լարված էր դարձել, որ նույնիսկ հնդկացիներին էր վախեցնում, և նրանք զարմանում էին անհասկանալի սպիտակ մարդու վրա, որն իրենց իր ստրուկներն էր դարձրել և ստիպում էր այդքան անմտորեն վատնել ուժերը:

Իսկ հետո, երբ նրանք մոտեցան Լե-Բարժ լճին, նորից սկսվեց սառնամանիքը, և միջմոլորակային տարածությունների ցուրտը ավելի քան վաթսուն աստիճան զրոյից ցած ուժով հարվածեց մեր մոլորակի վերնաշերտին: Ավելի ազատ շնչելու համար բերանը բաց քայլելով, Ռասմուսսենը մրսեցրեց թոքերը, և մնացած ամբողջ ճանապարհին նրան տանջում էր չոր, կցկտուր հազը, որն ուժեղանում էր խարույկների ծխից և ուժից վեր աշխատանքից:

Երեսուներորդ Մոդնի գետի վրա նա հանդիպեց մեծ սառցահալ տեղերի, որոնք ծածկված էին դավաճան սառցակամրջակներով և երիզված բարակ ու անհուսալի նոր սառցաշերտով: Այդ նոր սառցաշերտի վրա հույս դնել չէր կարելի և հնդկացիները տատանվում էին, բայց Ռասմուսսենը սպառնում էր նրանց ատրճանակով ու առաջ գնում, առանց որևէ բանի նայելու: Սակայն սառցակամրջակների վրա, թեև ձյունով ծածկված, դեռևս կարելի էր նախագգուշական միջոցներ ձեռնարկել: Նրանք այդ կամրջակներն անցնում էին դահուկներով, երկար ձողափայտերը ձեռքներին բռնած, որպեսզի սառույցը կոտրվելու դեպքում դրանց վրա հենվեն, և, այն կողմն անցնելով, կանչում էին շներին: Եվ հենց այդպիսի մի կամրջակի վրա, որտեղ ձյան տակ թաքնված սառցանցքն աննկատելի էր, զոհվեց հնդկացիներից մեկը: Նա ջրի տակն անցավ մի ակնթարթում և անհետ կորավ, ինչպես դանակը թթվասերի մեջ, ու ջրի հոսանքն անմիջապես սառցի տակ քաշեց նրան:

Նույն գիշեր լուսնի գունատ լույսով փախավ երկրորդ հնդկացին: Ռասմուսսենը իզուր լռություներ խզեց ատրճանակի կրակոցներով, որով նա գործում էր ավելի մեծ արագությամբ, քան հմուտությամբ: Երեսուներեք ժամ հետո այդ հնդկացին հասավ Մեծ Սաղմոն գետի վրա գտնվող ոստիկանատան պահակակետին:

— Տարօրինակ մարդ: Ինչպես ասել՝ ծուռգլուխ,— բացատրում էր թարգմանիչը զարմացած կապիտանին:— Ի՞նչ: Հա էլի, խելքը թռցրել է, բոլորովին ցնդել: Ասում է՝ ձու, ձու... Անընդհատ ձվի մասին է խոսում: Հասկանալի՞ է: Շուտով այստեղ կգա:

Անցավ երեք օր, և Ռասմուսսենը իրար կապված երեք շնասահնակով ու մի լծվածքի մեջ միացված բոլոր շներով հայտնվեց պահակակետում: Դա շատ անհարմար էր, և այն տեղերում, որտեղ ճանապարհը վատ էր, նա սահնակները փոխադրում էր հերթով, թեև հերկուլեսյան ջանք գործադրելու գնով նրան երբեմն հաջողվում էր դրանք փոխադրել առանց իրարից անջատելու: Ռասմուսսենին, ըստ երևույթին, բոլորովին չհետաքրքրեց, երբ կապիտանը նրան ասաց, թե նրա հնդկացին գնացել է Դոուսոն և այժմ, հավանաբար, գտնվում է Սեյքերկի և Սթյուարտ գետի միջև ընկած որևէ տեղում: Նա միանգամայն անտարբերությամբ լսեց նաև այն լուրը, թե ոստիկանությունը արահետ է բացել մինչև Փելլի. նա այնտեղ էր հասել, որ ճակատագրական անտարբերությամբ էր ընդունում այն ամենը, ինչ նրան ուղարկում էր տարերքը՝ ինչպես բարին, այնպես էլ չարը: Բայց երբ նրան ասացին, թե Դոուսոնում խիստ սով է, նա քթի տակ ժպտաց, լծեց իր շներին ու շարունակեց ճանապարհը:

Ծխի հանելուկը պարզվեց միայն հաջորդ կանգառում: Հենց որ լուր հասավ Մեծ Սաղմոն, թե արահետ է բացված մինչև Փելլի, ծխաշղթան դադարեց Ռասմուսսենին հետապնդելուց և, իր մենավոր խարույկի մոտ նստած, նա տեսնում էր իր մոտով անցնող սահնակների խայտաբղետ շարանը: Առաջինն անցան սուրհանդակը և մետիսը, որոնք նրան հանել էին Բեննեթ լճից, այնուհետև՝ Սյորքլի համար փոստ տանող սահնակը, իսկ նրանց հետևից Զլոնդայկ ձգվեցին երջանկություն որոնող խայտաբղետ մարդիկ: Շներն ու մարդիկ կայտառ, հանգստացած տեսք ունեին, իսկ Ռասմուսսենն ու նրա շները այնքան էին տանջվել ու նիհարել, որ նրանցից միայն կաշի ու ոսկոր էր մնացել: Ծխաշղթայի մարդիկ երեք օրից մեկն էին աշխատում, հանգստանալով և ուժերը խնայելով մինչև այն ժամանակ, երբ կարելի կլիներ ճանապարհ ընկնել արդեն բացված արահետով, իսկ Ռասմուսսենը առաջ էր նետվում, դժվարությամբ դոփոդփելով ճանապարհը, հյուժեղով իր շներին, նրանց վերջին ուժերը քամելով:

Նրան ընկճել հնարավոր չէր: Այդ կուշտ, հանգստացած մարդիկ սիրալիր կերպով շնորհակալություն էին հայտնում նրան այն բանի համար, որ նա այնքան հոգում էր իրենց մասին, շնորհակալություն էին հայտնում, լայն ժպտալով ու լկտիաբար ծաղրելով նրան. նա հիմա հասկացավ, թե՞ բանն ինչու՞մն է, բայց նրանց ոչինչ չպատասխանեց և նույնիսկ չչարացավ: Դա ոչինչ չէր փոխում: Գաղափարը՝ նրա հիմքում ընկած եռությունը մտում էր նույնը: Ինքն այստեղ է և իր հետ է հազար դյուծիկ, իսկ այնտեղ Դոուսոնն է. ուրեմն ամեն ինչ մտում է նախկինը:

Փոքր Սադմոնի մոտ նրա շների կերը պակասեց. Ռասմուսսենը նրանց տվեց իր բաժինը, իսկ ինքը մինչև Սեյքերկ սևվեց միայն բակլայով, խոշոր սև բակլայով, որը շատ սննդարար է, բայց այնքան կոշտ, որ ստամոքսը ցավից երկու կես է լինում: Սեյքերկում ֆակտորիայի դռների վրա մի հայտարարություն էր կախված, թե ահա երկու տարի է, ինչ նավերը Յուքոնի հոսանքն ի վեր չեն գնում. ուստի և մթերքը խիստ թանկացել է: Ընկերության գործակալը նրան առաջարկեց փոխանակում կատարել՝ ամեն մի ձվի համար մի ափսե այլուր, բայց Ռասմուսսենը միայն գլուխն օրորեց և առաջ գնաց: Ֆակտորիայից այն կողմ ինչ-որ տեղ նրան հաջողվեց ձիու սառած կաշի գնել շների համար: Չիլքատի անասունի առևտուր անողները ձիեր էին մորթել, իսկ թափուկները հնդկացիներն էին հավաքել: Ռասմուսսենը նույնպես փորձեց ծամել կաշին, բայց կոշտ մազերը ծակում էին բերանում եղած վերքերը և ցավն անտանելի էր:

Այստեղ, Սեյքերկում նա հանդիպեց Դոուսոնում տիրող սովամահության առաջին բանբերներին. փախստականներն ավելի ու ավելի էին շատանում, նրանք մի տխուր տեսարան էին ներկայացնում:

— Ուտելու բան չկա,— ահա թե ինչ էին ասում նրանք միաբերան:— Ուտելու բան չկա, ստիպված ենք հեռանալ: Բոլորը ասածուն աղոթում են, որ գոնե գարնանը դրությունը մի փոքր թեթևանա: Այլուրի մեկ ֆուկստը մեկուկես դոլար արժե, և ոչ ոք էլ այն չի վաճառում:

— Ձո՛ւ,— հարցրեց նրանցից մեկը:— Հատը մեկ դոլար, միայն թե բոլորովին չես ճարի:

Ռասմուսսենը արագ հաշվումներ կատարեց մտքում:

— Տասներկու հազար դոլար,— ասաց նա բարձրաձայն:

— Ի՞նչ,— չհասկացավ հանդիպած մարդը:

— Ոչինչ,— պատասխանեց Ռասմուսսենը ու շներին քշեց:

Երբ նա հասավ Սթյուարտ գետին, որը Դոուսոնից յոթանասուն մղոն հեռավորության վրա է գտնվում, նրա հինգ շները սատկել էին, իսկ մնացածները ոտքի վրա չէին կարողանում կանգնել: Ռասմուսսենն ինքը նույնպես լծվեց սահնակին և, վերջին ուժերը լարելով, քաշեց: Բայց նույնիսկ այդ ձևով նա օրական հազիվ տասը մղոն էր անցնում: Նրա այտոսկրները և քիթը, որոնք շատ անգամ էին ցրտահարվել, սևացել էին, ծածկվել թեփուկներով. սարսափելի էր նրան նայելը: Բուժ մատը, որը մյուսներից ավելի շատ էր մրսում, երբ հարկ էր լինում դարձածողանը բռնել, նույնպես ցրտահարվել էր ու ցավում էր: Ոտքը, որը առաջվա պես հսկայական մոքասիկի մեջ էր դրված, մի տարօրինակ ցավով էր բռնված: Վերջին բակլաները, որ արդեն վաղուց օրաբաժինների էին վերածված, վերջացան Վաթսոններորդ Մոդոնի մոտ: Բայց Ռասմուսսենը համառորեն հրաժարվում էր ձվերին ձեռք տալուց: Նա այդպիսի բան մտքով անգամ չէր կարող անցկացնել, դա սրբապղծություն էր թվում նրան. և այսպես, օրորվելով ու ընկնելով, նա անցավ մինչև Հնդկացիական գետն ընկած ամբողջ ճանապարհը: Այստեղ մի տեղացու առատածեռնությունը և հենց նոր սպանված իշայծյամի թաղմը միսը ուժ տվեցին նրան ու շներին. մինչև Էյնսլի հասնելով, նա ոգով արիացավ: Դոուսոնից փախած մեկը, որը հինգ ժամ առաջ էր թողել քաղաքը, նրան ասաց, թե նա յուրաքանչյուր ձվի համար առնվազն մեկ դոլար քսանհինգ սենթ կստանա:

Ռասմուսսենը թրթռացող սրտով մոտենում էր գառիկող ափին, որտեղ դոուսոնյան Չորանոցների շենքն էր գտնվում. ծնկները ծալվում էին: Շներն այնքան էին ուժասպառ եղել, որ հարկ եղավ դադար տալ և, սպասելով մինչև նրանք կհանգստանան, նա թուլությունից հենվեց դարձածողանին: Շատ պատկառելի արտաքինով և արջի հաստ մուշտակով ինչ-որ մարդ էր անցնում նրա մոտով: Սա հետաքրքրասիրությամբ նայեց Ռասմուսսենին, կանգ առավ և մի գնահատող հայացք գցեց շներին ու ձգափուկներով կապկաված սահնակներին:

— Ի՞նչ ունեք,— հարցրեց նա:

— Ձու,— շնչոցից մի փոքր ավելի բարձր խռպոտ ձայնով դժվարությամբ խոսեց Ռասմուսսենը:

— Ձո՛ւ: Ուռա՛: Ուռա՛:— Մարդը վեր-վեր թռավ, կատաղորեն պտտվեց ու սկսեց պարել:— Չի՛ կարող պատահել: Այս բոլորը ձո՛ւ է:

— Այո, բոլորը:

— Լսեցեք, դուք, երևի Հազար Ղյուժինով Մա՛րդն էք:— Նա պտտվեց Ռասմուսսենի շուրջը և մյուս կողմից նայեց նրան:— Չէ, իսկապես: Ուրեմն այդ դո՛ւք էք:

Ռասմուսսենը լրիվ հավատացած չէր դրանում, բայց պատասխանեց հաստատապես, և մուշտակով մարդը մի փոքր հանգստացավ:

— Իսկ ինչքա՛ն էք ուզում դրանց համար,— զգուշությամբ հարցրեց նա:

Ռասմուսսենը համարձակություն ստացավ:

— Մեկուկես դոլար,— ասաց նա:

— Լավ, որոշված է,— հապճեպորեն պատասխանեց մարդը:— Մի ղյուժին տվեք ինձ:

— Ես... Ես ուզում եմ ասել, որ հատն է մեկուկես դոլար,— անվճռական բացատրեց Ռասմուսսենը:

— Հա՛, Էլի, լսեցի: Երկու ղյուժին տվեք: Ահա ավազը:

Մարդը դուրս քաշեց ոսկով լցված երշիկի պես հաստ մեծ տոպրակը և դարձածողանին խփելով, անփութորեն զնգզնգացրեց: Ռասմուսսենը տարօրինակ սարսուռ զգաց սրտի գդալի տակ, խուտուտ զգաց ռուկների մեջ և Նստեց ու լաց լինելու գրեթե անհաղթահարելի ցանկություն զգաց: Բայց շուրջն արդեն սկսում էր հետաքրքրասերների բազմություն հավաքվել, ու գնորդները մեկը մյուսի հետևից ձու էին պահանջում: Ռասմուսսենը կշեռք չուներ, բայց արջի մուշտակով մարդը կշեռք բերեց և պատրաստակամությամբ ավազն էր կշռում, մինչ Ռասմուսսենը ապրանքն էր բաց թողնում: Շուտով հրմշտոց սկսվեց, աղմուկ բարձրացավ: Ամեն մեկն ուզում էր գնել և ամեն մեկը պահանջում էր, որ առաջինը իրեն բաց թողնեն: Եվ որքան ավելի շատ էր հուզվում բազմությունը, այնքան ավելի հանգիստ էր դառնում Ռասմուսսենը: Այստեղ ինչ-որ բան այնպես չէ: Իզուր չէ, որ ձվերը խլիլում են, սրա տակ ինչ-որ բան կա թաքնված: Ավելի խելացի կլինե՞ր նախ սպասել ու գինն իմանալ: Գուցե հիմա ձուն արդեն երկու դոլար արժե: Համենայն դեպս՝ միշտ էլ մեկուկես դոլար կստանա:

— Վե՛րջ,— հայտարարեց նա մի երկու հարյուր ձու վաճառելուց հետո:— Այլևս չեմ վաճառում: Հոգնել եմ: Ես դեռ պետք է մի տնակ գտնեմ: Այ այն ժամանակ եկեք, կխոսենք:

Բազմությունը հոգոց հանեց, բայց արջի մուշտակով մարդը պաշտպանեց Ռասմուսսենին: Զսանչորս հատ սառած ձվեր կտկտոցով դեսուդեն էին զլորվում նրա ընդարձակ գրպաններում, և նրան բոլորովին չէր հետաքրքրում՝ արդյո՞ք կուշտ կլինեն մնացածները, թե՛ ոչ. բացի դրանից, նա տեսնում էր, որ Ռասմուսսենը հազիվ է ոտքի վրա կանգնած:

— Մի տնակ կա «Մոնտե Կառլոյի» մոտերքում, երկրորդ շրջադարձը, անմիջապես անկյունի հետևում,— ասաց նա,— այնտեղ լուսամուտը սողայի շշերից է պատրաստված: Տեսկը իմը չէ, միայն թե ինձ են հանձնարարել վարձով տալ: Գինը օրական տասը դոլար է, և դա դեռ Էժան է: Անմիջապես գնացեք: Ես հետո կգամ ձեզ մոտ: Չմոռանաք, լուսամուտի փոխարեն՝ շշեր:

— Տրա-լա-լա,— սկսեց երգել նա մեկ րոպե հետո:— Գնամ իմ տնակը ձվածեղ ուտեմ ու տան մասին երազեմ:

Ճանապարհին Ռասմուսսենը հիշեց, որ սոված է, և որևէ մթերք առնելու համար մտավ Ընկերության խանութը, իսկ հետո մսի խանութը՝ շների համար բիֆշտեքս ու չորացրած ձուկ առնելու: Նա անմիջապես գտավ տնակը և, առանց շներին արձակելու, կրակ վառեց ու սկսեց սուրճ եփել:

— Հատը մեկուկես դոլար... Հազար ղյուժին... Տասուկո հազար դոլար,— կրկնում էր նա կիսաձայն, վառարանի մոտ գործ անելով: Երբ նա բիֆշտեքսը զցեց թավայի վրա, դուռը ճռռաց: Ռասմուսսենը շրջվեց: Արջի մուշտակով մարդն էր: Նա ներս մտավ շատ վճռական, ըստ

երևույթին, ինչ-որ որոշակի նպատակով, բայց, Ռասմուսսենին տեսնելով, ասես շփոթվեց, և նրա դեմքը վարանմունք արտահայտեց:

— Ահա թե ինչ, լսեցեք...— սկսեց նա ու լռեց:

Ռասմուսսենը մտածեց՝ չի՞նի՞ բնակարանի վարձի համար է եկել:

— Լսեցեք, գրողը տանի: Ախր ձվերը, գիտե՞ք ինչ, հոտած են:

Ռասմուսսենը երերաց: Ասես փայտով գլխին հարվածեցին: Պատերը թեքվեցին և օրորվեցին նրա աչքի առջև: Նա ձեռքը առաջ մեկնեց ու բռնեց վառարանից, որ չընկնի: Ուժեղ ցավը և վառվող մսի հոտը ուշքի բերեցին նրան:

— Հասկանում եմ,— դժվարությամբ խոսեց նա, գրպանները քրքրելով:— Դուք ուզում եք ձեր փողը ե՛տ վերցնել:

— Բանը փողը չէ,— պատասխանեց արջի մուշտակով մարդը,— իսկ ուրիշ ավելի թարմ ձվեր չունե՞ք:

Ռասմուսսենը զլուխը տարուբերեց:

— Փողը ետ վերցրեք:

Բայց մուշտակավոր մարդը հրաժարվեց՝ ետ-ետ գնալով դեպի դուռը:

— Ավելի լավ է հետո գամ, երբ դուք ապրանքը բացած կլինեք, և ուրիշ ձվերի հետ փոխեմ:

Ռասմուսսենը տուն գլորեց կոճղը և ներս բերեց ձվով լիքը արկղները: Նա շատ հանգիստ գործի անցավ: Վերցրեց փոքրիկ կացինն ու սկսեց մեկը մյուսի հետևից կես անել ձվերը: Կես արածները ուշադիր զննում էր ու գցում հատակին: Սկզբում նա ձվերը վերցնում էր տարբեր արկղներից ջոկելով, հետո սկսեց ձեռքն ընկածը կիսել: Հատակին թափվող ձվերի կույտը մեծանում էր: Սուրճը եռաց ու թափվեց, բիֆշտեքսը վառվեց, և սենյակը լցվեց ծխահոտով: Նա կացնով կիսում էր անդադար, առանց մեջքը շտկելու, մինչև որ վերջին արկղը դատարկվեց:

Ինչ-որ մեկը դուռը թակեց, մեկ անգամ էլ թակեց ու ներս մտավ:

— Այս ի՞նչ է կատարվում այստեղ,— հարցրեց հյուրը կանգ առնելով շեմի վրա ու սենյակը աչք ածելով:

Կացնով կիսված ձվերը վառարանի տաքությունից սկսել էին հալվել, և թոպե առ թոպե հոտը ավելի ու ավելի էր սաստկանում:

— Երևի շոգենավի վրա են փչացել,— նկատեց ներս մտած մարդը:

Ռասմուսսենը ոչինչ չասող աչքերը հառեց նրա վրա:

— Ես Մերրեյն եմ, Մեծ Ջիմ Մերրեյը. բոլորն էլ ինձ այստեղ ճանաչում են,— ներկայացավ հյուրը:— Ինձ ասացին, որ ձեր ապրանքը փչացել է, երկու հարյուր դոլար եմ առաջարկում բոլոր ձվերի համար: Դա, իհարկե, այն չէ, ինչ-որ ձուկը, բայց շների համար պետք կգա:

Ռասմուսսենն ասես քարացել էր: Նա տեղից չշարժվեց:

— Կորեք գրողի ծոցը,— ասաց նա առանց դեմքի որևէ արտահայտության:

— Ապա մի մտածեցեք: Լավ գին է այսպիսի հոտած ապրանքի համար, այնուամենայնիվ ոչնչից լավ է: Երկու հարյուր: Դե, ի՞նչ եք ասում:

— Կորեք գրողի ծոցը,— ցածր ձայնով կրկնեց Ռասմուսսենը,— կորե՞ք այստեղից:

Մերրեյը սարսափով նայեց նրան, հետո կամացուկ դուրս եկավ՝ ետ-ետ գնալով և աչքերը Ռասմուսսենից չկտրելով:

Ռասմուսսենը նրա հետևից դուրս եկավ ու շներին արձակեց: Գնած ամբողջ ձուկը նրանց զցելով, նա քանդեց ու ձեռքի վրա փաթաթեց շնասահնակի ձգափուկերը: Հետո տուն մտավ ու դուռը

հետևից փակեց: Սենյակը ածխացած բիֆշտեքսի դառն ծխով էր լցվել: Ռասմուսսենը կանգնեց մահճակալի վրա, ձգափուկերն անցկացրեց գերանի տակով և աչքով չափեց երկարությունը: Պետք է որ կարճ թվացած լիներ նրան, նա աթոռը դրեց մահճակալին ու բարձրացավ վրան: Ձգափուկի ծայրին օղակ սարքելով, գլուխը մտցրեց մեջը, իսկ մյուս ծայրը ամրացրեց: Հետո ոտքով մի կողմ հրեց աթոռը: